



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





891.5423
36-514

ՅԱՐԱՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ



(Պ.Ա.Տիեր)

ԱՐԱՋՈՒՄ ՄԻԼԻՐԱՋԱԿԱՆ ՎՈՒԹՈՒԹԻՒՆ

Տպատում Հ. Հ. Բ Ա Ր Ա Յ Ա Ռ Ա
Տիպ. „ԳԵՐՄԵԸ“ Ս. Նազարյանց, Միջ. պր. № 81.
Թիվ 111 1904

Աֆ. Կ. Հայք. ԽՀՀ- Մայրաքանչեղ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՎԱԶԵԱՅ 18 NOV 2011

890.99-2-3
535581

6 դեկտ. 1904 թ.
Բ. Բ. Ա.

ԱՊԵՏԻԿ
ՄՈՒՐԱՅՎԱՆՈՒԹԻՒՆ

018



Տպագր. „ՀԵՐՄԵՍ“
Տիպ. „ՀԵՐՄԵՍ“ Ը. Նազարյանց, Միհայլ. պ. № 81.
Թիվ 111 1904

08 04 2013

28376

Дозволен. Ценз. Тифлисъ, 27-го Января 1904 г.

ստ. 870

Ա.Ռ.ԶԻՒ ՄՈՒՐՍՅԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Նոր-տարու նախըն-
թաց օրն է:

Դուրսը սասաիկ ցուրտ է և սառնա-
մանիք. գետերն ու ջրերը սառած,
ծածկուել են սառոյցի շերտերով:
Երկինքը պատած թանձր թղթե-
րով, խոժոռել է դէմքը, կարծես, սաս-
տիկ բարկացած լինի երկրի վրա. և
իր բարկութեան շանթերը թափում է,
մաղելով վերից վար Խոշոր ձիւն: Ցրտաշունչ քա-
սին կատաղել է և չարախնդաց ունցով ու սուլոցով
ուրբապտոյտ խաղեր է անում օդի մէջ և, ձիւնի հա-
տիկները պտտեցնելով, յանկարծ զարկում է կամ
անցուրականի երեսին, կամ պինդ գոցուած լու-
սամուտների ապակիներին:

Փողոցներում մարդ չէ երեսում: Շներն իսկ
ցրտից վախեցած, կուչ են եկել ապահով տեղերում,
պատերի տակ: Երբեմն-երբեմն երեսում են սահ-
նակներ, որոնց վրայ նստած է պարոնը՝ տաք
շուբի մէջ փաթաթուած և դէմքը ներս առած:
Բայց յետ ընկած թաղերի տներում, որտեղ

մարդկանցից մոռացուած ապրում են չքաւոր և աղքատ ընտանիքներ, ոչ միայն նոր տարուայ համար գոզինախի ու գինու պատրաստութիւն չեն տեսնում, ոչ միայն տաք սենեակներում նըստած զուարձախօսութիւններ չեն անում, այլ ընդհակառակը, տիսուր են և այսօր աւելի քան մի ուրիշ ժամանակ՝ զգում են իրանց սոսկալի թշուառութիւնը:

Այստեղ սոված ու կարօտ մարդարաբածներ, գետնափոր ցուրտ նկուղներում՝ բաց յառակի վրա նստած անիծում են և ողբում իրանց ծննդեան ժամը և դառն ճակատագիրը...

Մենք գնանք Հաւլաբարի չքաւորութեան մէջ տառապող մարդկանց մէկի Անանուն փողոցում ապրող ծերունի որմնագիր Մօսոյի բնակարանը: Ծերունի Մօսոն միայն քառասուն հինգ տարեկան մի մարդ էր, բայց նրա մարմնի ուժերը բուլըսվիս սպառուել էին. նա այլ ևս «կալատօղութիւն» (որմնագիր) չէր անում, որովհետեւ ոչ միայն չէր կարող աղիւս ու ցեխ բարձրացնել, այլ և հազիւ էր կարողանում թուլացած ծնկների վրայ ման ածել իր մարսինը, որ ջարդուել էր մի անգամ գերանների հարուածից: Մօսոն նիւթական ոչ մի ապահովութիւն չ'ունէր, երիտասարդ ժամանակ օր աշխատում, օր ուտում էր և հազիւ մի երկու չնչին կոպէկներ յետ գցում սև օրուայ համար: Աստուած տուել, չէր խնայել նրան զաւակներ, նա ունէր հինգ

դեռահաս որդիներ, որոնցից երեքը աղջիկ, երկուսը տղայ էին: Ամենամեծը, աղջիկը, 12 տարեկանն էր, իսկ ամենափոքրը $1\frac{1}{2}$ տարեկան: Բայցի այդ, նա ունեցել էր երկու մեծ որդի, որոնք վախճանուել էին:

Աշխատաւոր ոչ մի ձեռք չը կար այդ ընտանիքում: Ամառը՝ ծերունի Մօսոն գնում էր բազար, գալալութիւն անում տաւարի ու ոչսարի տոռուտուրի ժամանակ, և դրանով մի երկու կոպէկ վաստակում, ցամաք հաց գնում, տուն տանում ու դրանով մի կերպ ապրելով, Աստծոն փառք տալիս: Գործ չեղած ժամանակ, երբեմն շահիներով պարտք էր անում, և այդպիսով մօտ հարիւր բուլըի պարտք էր արել, որ նրա համար մի սոսկալի մեծ գումար էր:

Նրա կացած բնակարանը մի գետնափոր, հին սենեակ էր, որ գտնուում էր բակի ծայրում: Պատերը, ժամանակի հսութիւնից և երկար ժամանակ տանտիրոջ անհոգութեանը մատնուած լինելուց, մաշուել էին ու սուլազը թափուել էր, այնպէս որ բաց աղիւսներն էին միայն երեսում: Առաստաղը ծխից բոլորովին սեացել էր, և մի տախտակը այնպէս քաշ էր ընկել, որ ամեն բոսպէ վտանգ էր սպառնում թշուառ ընտանիքից մի զոհ տանելու: Յատակը բոլորովին մերկ՝ հող էր, խոնաւ այն աստիճան, որ ոտք դրած ժամանակ կպչում էր դետնին... Գետնափորը ունէր երկու փոքրիկ լուսամուտներ, մէկը դէպի փողո-

ցի կողմը, իսկ միւսը բակի, որնց վրայի ապահները վաղուց կոտրառուել էին և փոխանակ ապակու, դէմ էր դրուած ժանդուսուած ժեստ, կարդօն և թուղթ կացրած։ Դուռը բոլորովին կոտրած ու ճեղքուած էր, այնպէս որ ոչ միայն ցուրտը կարող էր ազատ կերպով ներս թափանցել, այլ և մի հաւ կարող էր ճեղքուածից ներս ու դուրս անել։

Սենեակում տիրում էր մթութիւն և խոնաւութեան ու մքլութեան հոտ։ Շ տարի կը լինէր, որ Մօսօյի դժբաղդ ընտանիքը ապրում էր այս գետնափորում, հնազանդուելով իրանց անողոք ճակատագրին։ Դրանից էժան սենեակ չէր գըտել Մօսօն, ամսական վճարում էր մի ըուբի, որ սակայն այդ գումարն էլ չէր կարողացել տալ և արդէն վեց ամսուայ վարձը՝ վեց ըուբին մընում էր պարտ տանաիրոջը։

Սենեակում ոչ մի կահ-կարասիք չը կար. միշայն պատի տակ, չորս ձողերի վրայ ամրացած էին հինգ հատ խորդ ու բորդ տախտակներ, որոնք կազմում էին տախտ։ Դրա վրայ պառկում էին փոքրիկները, հազիւ միմեանց մօտ կուչ դալով, իսկ Մօսօն և իր կին՝ Սալօմէն թաց գետնի վրայ էին քնում, տակները զցելով միսիան մի հին մաշուած խախի։ Տախտի վրայ, սի կողմում դարսուած էին քանի մի պատառտած հին անկողիններ։ Գետնափորի միւս անկիւնում դրուած էր մի կաւէ կարաս խմելու ջրով. պատի մէջ՝

թարէքի վրայ մի քանի հատ ափսէներ, մի կոտրած գանակ և թիթեղեայ ճրագ, առանց ապակու վառուող։ Ահա գետնափորի կահ-կարասիքը։ Մի խօսքով այդտեղ աղքատութիւնն ու ծայրահեղ կարիքը վաղուց խոր կերպով ցանել էին իրանց սերմը, որ հետգհետէ աճում էր ու ընդգրկում այդ համեստ ընտանիքին։

Այդ աղքատութեան ու տառապման վայրում ապրում էին եօթը ազնիւ հոգիններ, անտրտունջ կերպով, իրար միսիթարելով և ծանր թշուառութեանը դիմադրելով։ Բայց թշուառութիւնն անողոք ու անխիղճ գաղան է, որ երբ իր ճանկն է զցում աղնիւ, անգօր մարդկանց, մինչև վերջ ծծում է նրանց կենաքի հիւթը և հետգհետէ հաւելով ու մաշելով, զլորում դէպի ոչնչութիւն... Թշուառութիւնը փողից վախենալով վախչում է շահամոլ հարստի մօտից ու անկոչ հիւր դառնում պարկեշտ կեանք վարող «մարդ»-երին...

Զընայելով այդքան սոսկալի ծանր դրութեանը, ծերունի ամուսինները չէին յուսահատում։ Նրանց անմեղ զաւակների սէրը, սրանց հոգատարութիւնը պահպանում էր ծնողների հանդը։ Միենոյն ժամանակ Մօսօն և Սալօմէն ուխտել էին նամուսով ապրել ու նամուսով մեռնել։ Զընայած, որ օրերով քաղցած են մնացել, չոր հացն անգամ չեն կարողացել գտնել, բայց և այնպէս նրանց մաքով չէ անցել ուրիշ միջոցների դիմել, մանաւանդ մուրալ։ «Մինչև վերջին շունչ» չը

պէտք է մուրամ, կրկնում էր անբախտ Մօսօն, քաղցած ըսպէներին իսկ. Աստուած ողորմած է, սի կտոր չոր հաց մի կերպ կը տայ ուտելու»: Բայց Աստուած վաղուց կորցրել է իր ողորմածութիւնը. կարօտեախների և թշուառների լացը, հեկեկանքը ու բողոքները վաղուց ձանձրացրել են նրան...

Վերջին ժամանակներս աղքատութիւնը կատաղած այդ թշուառների համբերութեան վրայ, իր վերջին քայքայիչ ոյժերը լարել էր, ժանիքները բացել ու պատրաստ էր յարձակուել այդ ընտանիքի վրայ, նրան վերջնական հարուած տալու...

Երեկոն մօտենում է: Ցուրտը, ձիւնը ու սառնամանիքը դրսում սաստկացել են. փողոցում այլ ևս ոչ ոք չէ երկում:

Ծերունի Մօսօյի ընտանիքը փակուած իր թշուառութեան նկուղում՝ յուսահատութեան մէջ է... երկրորդ օրն է, որ նրանք բոլորն էլ քաղցած են: Առանց այդ էլ ուժասպառ մարմինները թուլացել են քաղցից. ցուրտը ներս է թափւում չորս կողմից ու սառեցնում գետնափորի մարդկանց՝ մինչ ոսկոները: Վառարան չ'ունեն, փայտ չ'ունեն. տաք հագուստ կամ վերմակ չ'ունեն: Սառնութիւնից ոչ մի տեղ չեն կարող փակչել նրանք:

—Վայ, մայրիկ ջան, մըսում եմ, զողդողաւով հեկեկում էր փոքրիկ երեխան:

Սալօմէն՝ որ իսքը նոյնպէս գողդողում է ու առամները կրծացնում, վերցնում է երեխային և ամուր կերպով կրծքին սեղմում: Բայց միւսնէրը... նրանք ձեռքերը խաչած կուչ են եկել տախտի վրայ. նրանց ոտները մերկ են և ցրտից համարեա անզգայացել են:

Վզզզ... երբեմն լսում է քամու ոռնոցը և իր սառնութեան հոսանքը յանկարծ ուժգնութեամբ ներս է թափում չորս կողմից ու բոլորի բերաններից խլում հառաչտնք:

—Վայ մեռայ, ցուրտ է, քաղցած եմ...

Խեղճ ծնողները իրանց քաղցածութիւնը թղղած, լուռ՝ միմեանց երեսին նայելով, մտածում էին մի ելք գտնել. մի քանի ժամ էլ անց, արդէն բոլորեքեանք սովից ու ցրտից կ'անշնչանան միասին...

—Մայրիկ ջան, քաղցած եմ, հայ, կրկն պահանջեց երեխան:

Իսկ միւս երեխաները, որոնք արդէն ըմբռնել էին իրանց զրութիւնը, լուռ էին և չէին ուզում իրանց հեկեկանքով աւելի ևս մորմոքել ծնողների վշտանար սիրտը: Մեծ աղջկայ աշքերից զլորուեցին արցունքի խոշոր կաթիւներ, ուրոնք մատաղ, միամիտ սրտի անկեղծ վշտի ու ցաւակցութեան նշաններն էին: Նա չը կարողացաւ իրան զսպել, եթէ մի փոքր էլ նստէր, լացն ու հեկեկանքը ակամայից դուրս կը թոշէին նրա յուզուած անմեղ հոգու խորքերից. ուստի նա շատապով դուրս ելաւ բակ:

—Ուր ես գնում, Սաթենիկ, կը մրսես, հոգիս, մի դուրս ելնիր, թոյլ ձայնով ասաց մայրը:

—Չեմ մրախ, անհոգ եղիր, մայրիկս, ասաց նա ու դուրս վազեց:

Դունը նա կուշտ լաց եղաւ, քամեց աչքերի վրայ ծանրացած խոշոր արցունքները: «Ի՞նչ անեմ, Տէր-Աստուած, մտածում էր թշուառ աղջիկը, սովից ու ցրտից մինչև երեկոյ կը մեռնեն հայրիկս, մայրիկս, քոյրիկներս. ախ, Տէր-Աստուած, խղճա մեզ»: Այդ ըովէին նա նկատեց, որ բակի շունը մի բաւական մեծ կտոր հաց կոծում էր՝ պատի տակ նստած: Սաթենիկը մտածեց գոնէ այդ հացի կտորը խլել շան բերանից ու տալ իր փոքր եղօրը, որ երեխայ է, չի կարող համբերել քաղցին: Նա յանկարծ մօտ վազեց, հօշտ արեց շանը. և շունը փախաւ, թողնելով ծամծմած հացի կտորը: Նա վերցրեց այդ, մաքրեց հողից ու ներս տարաւ, տուեց փոքր եղօրը:

—Ահա, Արամ ջան, հաց, կեր, ասաց նա փաղաքշանքով:

—Այդ որտեղից է, չը լինի թէ խնդրեցիր հարեաններից, զարմացած հարցրեց մայրը:

—Ոչ, մայրիկ, չեմ խնդրել, այլ դուրսը՝ պատի տակ ընկած էր, պատասխանեց Սաթենիկը:

—Հաց, հաց, ուրախացաւ փոքրիկը ու ագանութեամբ սկսեց ուտել:

Փոքրից մեծը արգէն բոլորովին թուլացել էր

քաղցից. Նա սառած՝ անզգայ ընկած էր տախտի վրա, բայց միւսները չէին նկատում, որովհետեւ իրանք էլ նոյն դրութեան մէջ էին և կուչ էին եկել: Սաթենիկն առաջնը նկատեց և մի սարսափելի ճիչ արձակելով, ընկաւ քըոջ վրայ:

—Մայրիկ ջան, Շողոկաթը մնանում է.— Շողոկաթ, սիրելի քոյրիկս, սթափուիր, լաց էր լինում և քաշը շունը նրան:

Մի բոպէում սզի տուն դարձաւ այդ գետնափորը, Մօսօն քիչ էր մնում, որ խելագարուէր, մայրը, վայր գնելով փոքրիկին, վրայ վազեց ու խելագարի պէս սկսեց կոծել:

Անզգայացած աղջիկը փոքր ինչ սթափուեց. նրա շրթունքներից թոյլ կերպով լսուեց.

—Քաղցած եմ:

Մինչ այդ՝ բակի կեցողները՝ այդ յանկարծական լաց ու շիւանի վրա ներս էին եկել և օգնում էին սովամահ լինող փոքրիկ Շողոկաթին սթափեցնել. նրանք արգէն հասկացան, թէ բանն ինչումն է. ուստի օգնութեան հասան այդ դամն ձգնաժամին. մէկը հաց բերեց, միւսը կերակուր, երրորդը կրակ բերեց նրանց տաքացնելու համար: Սովածները կերան հացը, փոքր ինչ տաքացրին իրանց ցրտատար մարմինները ու շնորհակալ եղան նախ՝ Աստծուց, որ չը կորցրեց այդ վերջին ըովէին իսկ, և ապա զրկիցներից, որոնք հասցրին հաց ու կրակ...

Ամեն բան հանդարտուեց:

— 12 —

Դրլիցները համբերութիւն մաղթելով այդ
թշուառներին, քաշուեցին իրանց աները։ Այժմ
Մօօյի զաւակները փոքր ինչ յագեցրին իրանց
սոսկալի քաղցը. բայց դա ժամանակաւոր էր։
Զիւնը չէր դադարում, փաթիլ-փաթիլ վերից թափ-
ւում էր զայրացած և ծածկում ամեն ինչ իր
սաւանի տակ։

—Այ մարդ, վերջապէս խօսեց Սալօմէն,
ինչ ես մտածում, ինչ պիտի լինի մեր վերջը,
ախր էգուց որ բոլորս էլ կը մեռնենք ցրտից ու
սովորից։ Երեկոյեան տանտէրը կը դայ և դուրս
կ'անէ մեզ տնից, այն ժամանակ...

—Ինչ անեմ, այ կնիկ, խելքս թոյնում եմ,
էս է կը խելագարուեմ կամ յանկարծ կ'անշնչա-
նամ, պատասխանեց դողդոջուն ձայնով ծերու-
նին, ձեռները կրծքին դարսելով։

—Գնա պարտք արա, մի տեղից մի թիքա
հաց բեր, թէ չէ, մինչև վաղը յոյս չ'ունեմ ապ-
րելու, սրանք մեղք են, խղճա, ցոյց տուեց նա
երեխաներին։

—Որտեղից ճարեմ, այ կնիկ, էլ ՞վ կը տայ,
ամենքին էլ պարտ եմ, էլ երես չ'ունեմ. գնամ
ջուրն ընկնեմ, լաւ է՝ քան թէ էլի պարտք խընդ-
րեմ. էս օր էլ տանտիրոջ նշանակած օրն է, որ
պիտի դայ, քրէնը ստանայ. ասաց, որ թէ գեկտ.
31-ին առաւօտը չը տանեմ բոլոր 7 րուբլին, դուրս
կը վոնտէ էս ձուն-ձմեռ օրով փողոց, գոնէ նա
խղճար։

—Ա՛խ, Տէր-Աստուած, էս ինչ օրը գցեցիր
մեզ, խղճա, է, ինչ մեղք ենք գործել, մրմնջաց
Սալօմէն աչքերից յորդառաստ արտասունք թա-
փելով. չէ որ մենք էլ քո սաեղծածներդ ենք,
ախր էս թշուառ մանուկներին խղճա. վաղը նոր
տարի է, աշխարհք ուրախութեան ու ցնծութեան
մէջ է, իսկ մէնք, մենք չոր հաց ու մի կտոր
փայտ չ'ունինք, որ չը մեռնենք...

Հեկեկանքը խեղդեց նրան կոկորդը. նա լուռ
սկսեց լալ ու արտասուել։

—Մայրիկ, մայրիկ, էգուց նոր տարի է, ինձ
համար կանչիտ ու գողինախ կառնէք, չէ, խօ-
սեց փոքրիկը։

Բայց մայրը լուռ նայեց նրան ցաւակցական
հայեացքով ու գրկելով նրան՝ մի ջերմագին համ-
բոյը գրոշմեց մանկան ճակատին, ասելով.

—Խեղճ երեխայ, ցամաք հաց անգամ չ'ու-
նինք, կանչիտ ես ուզում...

«Ա՛խ, հարուստներ, հարուստներ, ինչ կը-
լինի, որ նայէք մեզ նմանների վրայ, մի ըովէ
ականջ դրէք մեր վշտահար սրտերի աղերսանքին
ու օգնէք մեզ։ Ի՞նչ էք անելու ձեր միլիօնները
ու հարիւր-հազարները...» մտածեց Սալօմէն ինքն
իրան, ձեռքը ճակատին դրած։

Իսկ երեխաները խմբուած կրակի շուրջը,
միմեանց պատմում էին, թէ ինչպէս ուրիշ անե-
րում. վաղը՝ նոր տարին ուրախ կ'անցկացնեն,
գողինախ ու քաղցրաւենի կ'ուտեն, թէ ինչպէտ-

հարուստ տների երեխաները նոր շորեր կը հագնեն, տօնածառ կը գնան, նուէրներ կ'ստանան, իսկ իրանք...

Իսկ իրանք աղքատ են և մարդկանցից թողնուած... վաղ ամենքը միմեանց հանդիպելիս կասեն.

— Ենորհաւոր նոր տարի:

Իսկ իրանք իրանց չքաւորութեան ու տանշանքների, վշտերի ու հոգսերի անվերջ հեկեկանքներն ու արցունքները պիտի թափեն, որոնք գետնափորի չորս գուրա ու լերկ պատերին դիպչելով, պիտի արձագանքեն.

— Թշուառներ և անբաղդներ, ձեզ և ձեր նմանների համար չէ նոր տարին, ձեզ համար չէ ուրախութիւնը, այլ հարուստների և ունեորների համար...

Դուք մի կտոր հացի ու հագուստի համար լացեք... և միախառնեցեք ձեր հեկեկանքների ձայնը հազարաւոր թշուառների հեկեկանքների հետ, որոնք անմատչելի են «Երջանիկներին»...

Օրը մժնում էր. հարկաւոր էր մի վճռականքյլ անել, ապա թէ ոչ հետեւել օր՝ նոր տարուն, երբ ուրիշները ուրախ տրամադրութեան տակ, միաժամանակ մոռացած իրանց հոգսերը կը չնորհաւորեն միմեանց, իրանք թերևս ամբողջ ընտանիքով ցրտից ու քաղցից անշնչանան ու սառած դիակներ դառնան:

Այլ ևս շատ չսպասեց մայրը՝ Սալօմէն, դժուարութեամբ շարժեց իր ուժասպառ մարմինը, իջաւ տախտից, հին պատառուտած շալլ զլսին քաշեց, ասելով.

— Այ մարդ, այլ ևս չի կարելի համբերել, մեղք են էս երեխէքս. դէհ. դու լաւ նայիր սրանց, հոգ տար, ես գնամ մի կտոր հացի փող գտնեմ:

— Ո՞ւր ես գնում, Սալօմէ, հարցըց ծերունին շփոթուած:

— Գնում եմ մուրալու, ձեռք մեկնելու... հազիւ լսելի ձայնով ասաց Սալօմէն և իսկոյն նրա փոս ընկած աչքերից արտասունքը գուրս ցայտեց:

— Ի՞նչ, ի՞նչ, մուրալու, ախ, Տէր-Աստուած, չես տեսնում մեղ, չես խղճում, հառաչեց Մօսն:

— Ոչինչ, սիրելիս, կեանքիս մէջ չարածը պէտք է անեմ ի սէր զաւակներիս, լաւ է ինձ թոյն ընդունել, պատերի տակ մեռնել սովից, քան մուրալ, ողորմութիւն ինորել, բայց... բայց... զա... ւակ... ներս... հառաչեց նա տիրագին:

— Գնա, գնա, Սալօմէ, Աստուած քեզ հետ, դա կը լինի մեր կեանքի ընթացքում առաջին ամենամեծ նախատինքը. գնա. թող այս չարաբաստիկ օրը, այս ժամը անցնի և մոռացուի:

Սալօմէն աչքերը մաքրելով դիմեց դէպի դուրս:

— Մայրիկ ջան, ես էլ կը գամ, գոչեց Սաթենիկը և վազեց դէպի դուռը:

—Նստիր այստեղ, սաստեց Մօսօն, գնում
ես տեսմելու և մամնակից լինելու ծնողացդ պար-
սաւելի քայլը, մնա այստեղ:

—Ոչ, հոգեակս, դու մի գալ, դու հետեւիր
քոյրերիդ, որ լաց չը լինեն, ես գնում եմ...ըըը...
ես շուտով հաց և միրգ կը բերեմ... ասաց մայրը
և դուրս ելաւ լալագին:

Նա այն աստիճան խորասուզուած էր մտած-
մունքների մէջ, որ իրան աննկատելի կերպով ըն-
կաւ փողոցի մէջ տեղ և այնտեղով էր առաջ
գնում: Դիմացից եկող սահնակի կառապանը դեռ
հեռուից բարձրաձայն գոռաց Սալօմէին—հեռա-
նալ ճանապարհից, բայց վերջինս չէր լսում. այլ
միայն իր վշտերի հետ մտքում խօսելով շարու-
նակում էր տատանուելով առաջ քայլել ճանա-
պարհի միջով: Սահնակը այնքան մօտեցաւ, որ
քիչ մնաց Սալօմէին տակն անէր և փողոցում
զոհէր, սակայն կառապանը կարողացաւ զսպել
կատաղի ձիաներին, որոնք փոնչալով առաջ էին
վագում և կառծես ասում էին միմեանց. «Թո-
ղէք, այս թշուառի տառապեալ ու վշտակից կեան-
քին ժամ առաջ վերջ տանք, քանի որ մարդիկ
չեն խղճում սրան...»:

Այս դէպքը սթափեցրեց Սալօմէին. նա ա-
զատուելով տանջուող մտքերից, հասկացաւ, որ
մեծ վտանգից—վրկուեց և իր կեանքը կենդա-
նի մնաց իր քաղցած և խնամքի կարօս դժբաղդ
երեխաների համար:

Նա փառք տալով Աստծուն, շարունակեց
ձանապարհը և մտաւ Սօլօլակի մեծ փողոցը. վրձ-
ուական ըռպէն մօտենում էր. նա գնում էր հա-
ցի փող մուրալու Սօլօլակում քնակուող որևէ
հարուսափից:

«Տէր Աստուած, մտածեց Սալօմէն, միթէ
այն օրը զցեցիր սեղ, որ պէտք է մուրանք, մու-
րմնք մենք, որ մեր կեանքի շատ նեղ ըռ-
պէներին իսկ չենք առել այդ բանը: Ինչպէս մու-
րամ, ում դիմեմ, ինչ անեմ... Ախ, երանի բո-
լորովին ծնուած չը լինէի»:

Ամօթի ու, դառնութեան երկու խոշոր ար-
ցունքներ դուրս ցայտեցին նրա աչքերից և զլոր-
ուեցին մաշուած երեսի վրայով:

Բաւական առաջ գնալուց յետոյ, նա դան-
դպղացրեց քայլերը և կանգ առաւ մի եռյարկա-
նի մեծ, հոյակապ շինութեան առաջ: Սաորին
յարկի մեծ պատուհաններից երեսում էին դէմքեր:
Սալօմէն կարմրելով մինչեւ ականջները և երեսը
քօղարկելով իր շալի մէջ, սկսեց դիտել ներսը:
Շքեղ կահաւորուած դահլիճի կենդրոնում դրուած
էր «տօնածառ», որ զարդարուած էր զանազան
ընտիր խաղալիքներով ու շաքարեղիններով: Երեք
հատ փոքրիկ տղայ և մի փոքրիկ աղջիկ շրջապա-
տել էին տօնածառը և նայում, դիտում էին նրան,
ուրախանում ու ցնծում: Պատուհանի մօտ, մի
քիչ աւելի ներս՝ նստած էին մի լաւ հազնուած
հաստափոր պարոն, միջին տարիների, և մի

աղճուած տիկին։ Երեխ նրանք անհոգ, ուրախ շնչում էին միմեանց ականջին ամուսնական երջանկութեան խօսքեր և նայելով իրանց երջանիկ մանուկների վրայ, աւելի էին հրձում։ «Ահա հարուստ երջանիկներ, մտածեց Սալօմէն, երեխաներս չոր հաց անդամ չ'ունին, իսկ նրանք, նրանք... Եթի Աստուած, Քո դատաստանը արդար չէ...»

Նա վճռեց քայլն անել, բայց քարացած մընաց իր տեղում։ Ամուսինները նկատելով այդ գձուձ հագնուած կնոջը, մօտեցան պատուհանին և արհամարական հայեացք ձգեցին նրա վրայ, կարծես, ուզում էին ասել.

—Նախանձում ես մեր դրութեանը, դու չ'ունիս այսպիսի բաներ, որովհետեւ հասարակ արաբած ես և աղքատ, իսկ մենք հարուստ ենք...

Սալօմէն ուզեց ձեռքը մեկնել, խնդրել, բայց ձեռքը չը շարժուեց. կրկին փորձեց, կրկին ձեռքը մնշարժ մնաց։

Յանկարծ նա շուռ եկաւ և մի-երկու քայլ արեց։

—Ոչ, չեմ կարող մուրալ, ամաչում եմ, հեշեկաց նա, հարուստները ինձ չեն հասկանալ, լաւ է անօթի մեռնենք, քան այս ստոր քայլն անենք։

Քիչ առաջ գնալուց յետոյ նորից կանգ առաւ, ինքն իրան խօսելով. „Բայց զաւակներս, մնաեղ գառնուկներս սոված են՝...”

Մայրական սէրը իսկոյն յետ գարձեց Սալօմէն, ստիպեց ակամայ մուրալ ի սէր զաւակ-

ների։ Սալօմէն վերադարձաւ, դիմեց դէպի վերոյիշեալ տունը, մի վայրկեան կանգնեց բարձրակամար մուտքի առաջ, նայեց չորս կողմ, տեսնելու, թէ արդեօք իրան չեն նկատում, և յանկարծ ներս մտաւ ու զանդահարեց։

Ծառան դուռը բացեց և հարցը եց.

—Ո՞ւմ էք կամենում։

—Պարոնին խօսք ունեմ ասելու, խնդրեմ ինձ ներս թող, պատասխանեց կինը գողդոջուն ձայնով։

Ծառան, որ երիտասարդ, թիսադէմ մի մարդ էք, հետաքրքիր նայեց պառաւին, մի ըովէ տարակուսեցաւ և խօսեց.

—Զէ կարելի իմանալ, թէ ի՞նչ գործ ունիս պարոնիս հետ, ազգդ ասիր, որ յայտնեմ։

Այդ ըովէին ներսից լսուեց պարոնի հրամայողական բարիտօնը.

—Յակոբ, ով է զանդահարողը, ներս կանչիր։

—Աղա, մի կին է, ուզում է ձեզ տեսնել, պատասխանեց ծառան։

Իսկոյն պարոնը դուրս եկաւ նախասենեակ, տեսաւ Սալօմէին, մի խիստ հայեացք ձգեց նրա վրայ ու հարցը եց.

—Հը, ի՞նչ ես ուզում, ով ես։

Սալօմէն պարոնի խիստ հայեացքից թէ վախեցաւ և թէ շփոթուեց. նա ուզում էր խօսել, յայտնել, որ եկել է իր քաղցած երեխաների համար մի կտոր հաց խնդրելու, բայց լեզուն չէր շարժւում բերանի մէջ։

— Դէ, խօսիր, ինչ ես հայվանի պէս ցցուել,
կանգնել, գոռաց պարոնը:

Նրա գոռոցի վրայ գուրս եկաւ մեծատուն
տիկինը:

— Ետո տակայ, հարցրեց նա ամուսնուն:

— Չորտ յա շնուի պատասխանեց պարոնը
նոյնպէս ոռւսերէն լեզուով:

— Բարի պարոն, եե-ես... մուրացկան չեմ,
կսկմաց Սալօմէն՝ բոլորովին կարմրած ամօթից,
եօթը հատ մանը երեխայքս տանը քաղցած են,
ամուսինս ծե-ե-եր է, չի կարողա-ա-ա-նում
ա...շխա...ա...տել, մեր սենեակը ցուրտ է... ցըր-
տից սառչում ենք...տեղ չ'ունինք...

— Ես ի՞նչ անեմ, ընդհատեց պարոնը, — ես
մեղաւոր եմ, որ մրասում էք ու քաղցած էք, գնա,
գնա, սա քաղցածների տեղ չէ:

— Բարի տիկին, խղճացէք, մենք էլ Աստծու
ստեղծած մարդիկ ենք, մինչև վաղը քաղցից կը
մեռնեն մատաղ զաւակներս, այս գիշեր փողոցում
կը մնանք... դիմեց տիկնոջը Սալօմէն, յոյս ունե-
նալով, որ կնոջ սիրտը իբրև քնքոյշ և զգայուն
սիրտ, շուտ կը շարժէ:

— Դա իմ գործը չէ, զլուխը շարժելով պա-
տասխանեց տիկինը:

— Աղաչում եմ, ինդրում եմ, միայն մի տաս
ըուբլի տուէք, պարտքս տամ և այսօր փողոցում
չը մնանք, մնացածով էլ հաց կը գնեմ որդոցս
համար, աղերսեց Սալօմէն լաց լինելով. — ես այլ

և չեմ ձանձրացնի ձեզ, խղճացէք ի սէր մար-
դա...սիրու...թեան...

Հեկեկանքը դարձեալ խեղդեց նրա կոկորդը:
— Հայդէ, հայդէ, գնա, ես էլ կարծեցի խէ-
րով մարդ է եկել, բացականչեց պարոնը, ինչ քիչ
փող է ինդրում. քեզ նման հազարաւորները կան,
մէկին տամ, միւսն էլ կը գայ: Գնա, գնա, Յա-
կոր, ճանապարհ գցիր սրան:

— Խղճացէք, մտէք դրութեանս մէջ, մի թող-
նէք պատերի տակ մեռնել, լալիս էք խեղճ կինը
և գլուխ շալով մաքրում անձրկի պէս թափւող
արտասունքը:

— Մեռնում էք, մեռէք, զայրացաւ պարոնը,
ձեզ նմանները որ չ'ապրեն աշխարհիս վրայ, աւե-
լի լաւ է: Ապա նա արագութեամբ դրալանից մի
յիսուն կոպէկանոց հանեց, տուեց ինդրող կնոջը
և աւելացրեց.

— Դէ, վերցրու գնա. այլևս այս կողմերում
չ'երևաս. տաց ու կնոջ հետ ներս մտաւ, դու-
ռը ծածկեց:

Սալօմէն մի ըոսէ կորցրեց իրան. նրան թը-
ւում էք թէ սա իրականութիւն չէ, այլ երազ: Միթէ ինքն է, որ եկել է մուրում է, լաց է լի-
նում, աղի արցունք թափում ի սէր մատաղ երե-
խաների. բայց հարստի սիրտը ապառաժ է. նա
չէ զգում և անպատճում է Սալօմէին նրա աղ-
քատութեան համար:

Ռոպէապէս ուշքի եկաւ, նախեց տուած 50

կոպէկանոցին ու ինքն իրան արտասանեց.

— Յիսնւն կոպէկ, այսքան միայն խիղճ ու կարելցութիւն կայ այս մարդկանց կըծքում...

Նա ուզեց այդ 50 կոպէկը յետ տալ ակամայ բարեգործին, նոյն իսկ շպրտել նրա երեսին ու հեռանալ, բայց իսկոյն յիշեց կարօտեալ մանրիկներին և պինդ բռնեց 50 կոպէկամոցը:

— Շնորհակալ եմ, դուրս թռաւ Սալօմէի շըրթուներից ինստինկտաբար:

Ծառան՝ որ տեսնելով դժբախտ կնոջ դառն արցունքը և լսելով նրա աղերսանքը, խղճահարհուել էր, ապուշի նման կանգնած մնացել էր, մտածեց ինքն իրան. „Ա՛խ ինչու չ'ունեմ կարողութիւն, որ օգնեմ սրանց նմաններին“:

Սալօմէն սաստիկ յուզուած դիմեց դէպի դուրս:

— Գետին, պատառուիր և ինձ կլանիր, ամօթինձ...մքանիւն էր նա ինքն իրան բաւական լսելի ձայնով.

— Ո՞հ, արդեօք ի՞նչ եղան երեխանցքս...

Ծառան դուռը բացեց. Սալօմէն դուրս եկաւ նախագաւիթ. ինքն էլ հետևեց նրան, և գաւթում գրպանները սկսեց պարտել. — ընդամենը 27 կոպէկ մանրադրամ գտնելով, նա տուեց Սալօմէին ու ասաց.

— Մայրիկ, վերցրու այս փողը, հաց առ երեխէքիդ համար, այսքանով միայն ես կարող եմ օգնել:

Կինը կանդ առաւ սառա այդ անսպասելի իրողութեան վբայ, աչքերը մաքրեց և հետաքրքրութեամբ դիտեց համեստ բարերարին:

— Ի՞նչ ես անում, որդի, քո աղան, որ այնշափ հարուստ է, յիսուն կոպէկ տուեց և յիսուն անգամ անսպատուեց, իսկ դու ծառայ ես չընչին ոռճիկիցդ ինչու ես կտրում, ինձ տալիս, դու էլ կ'ունենաս հարազատներ, որոնց երկի օգնում ես, ոչ, ոչ, չեմ վերցնի:

— Վերցրու, վերցրու, մայրիկ, Աստուած ողորմած է, ասաց ծառան ու փողը դրեց նրա բուռը:

— Շնորհակալ եմ, բարի մարդ, թող Աստուած քեզ սրա փոխարէն կրկնակի վարձատրէ: Այս քո մի քանի կոպէկը անհամեմատ շատ է թւում ինձ, քան պարզնիդ տուած յիսուն կոպէկը:

— Ոչինչ, մայրիկ, ոչինչ. մի խորհուրդ էլ կը տամ. ահա այս փողոցը վեր բարձրացիր, աջ կողմում մի մեծ տուն կայ, մտիր և հարցըրու պ. ՆԵ-ին. նա շատ բարի և հարուստ մարդ է, անպատճառ կ'օգնէ քեզ մի խոշոր գումարով:

— Ոչ, ոչ, երեք, ես սովոր չեմ մուրացկանութեան, կեանքիս ընթացքում սա «առաջին մուրացկանութիւնն» էր, որ արեցի ծայրահեղ կարիքից ստիպուած ի սէր իմ մանր երեխաներիս: Սակայն համոզուեցի, որ մեր հարուստները քարասիրտ և անխիղճ մարդիկ են... լսել էի, բայց չէի հաւասառում: Արդեօք ի՞նչ են անելու այն սի-

լիօնները... չէ որ ամբողջ հարստութիւնը մնալու
է երկրիս վրայ, իսկ իրանք մի քանի չոր տախ-
տակներ միայն կը տանեն գերեզման...

Նա կրկին շնորհակալ լինելով ծառայից, դուրս
ելաւ և դիմեց դէպի տուն:

«Հասարակ մարդու մէջ աւելի խիղճ ու
ազնւութիւն է եղել, քան հարուստ, հաստափոր ա-
ղաների մէջ, եղրափակեց իր մաքում Սալօմէն,
—թշուափին թշուառն է միշտ կարեկից...»

Արդէն կատարեալ մութն էր: Դրսում սառ-
նաւանիք էր: Մարդիկ պատսպարուած իրանց
տաք բնակարաններում, արդէն քէֆ ու ցնծումով
գիմաւորում էին նոր-տարուն: Լապտերների լոյսը
փողոցում՝ ցրտի տակ փայլիում էին չարագու-
շակ կերպով...

Սալօմէն լարեց իր թոյլ ոյժերը և քայլերն
արագացրեց. նրա մաքում զանազան մտածմունք-
ներ գալիս էին անցնում: Առաւելապէս մտապատ-
կերում էր իր երեխաներին, թէ արդեօք ցրտից
չեն սառել, քաղցից չեն ուշաթափուել: Նա ու-
զում էր այդ փայրկենին թե առնել և թռչել իր
խոնաւ նկուղը—զաւակների մօտ:

Ճանապարհին շարունակ յիշում էր այն պա-
տուհանը, կահաւորուած դահլիճը, վառած վառա-
րանը, շքեղ տօնածառը, երջանիկ երեխաներին,
բախտաւոր ամուսիններին... Յիշում էր իր մու-
րացկանութիւնը, պարոնի քարասրութիւնը, ան-

պատուելը, 50 կոպէկի չափ խղճահարուիլը, բա-
րի ծառային...

Փողոցի տներից մէկի միջից լսուեց դաշնա-
մուրի և ջութակի ձայն. «Կեանքը ձերն է, դուք
էք վայելում աշխարհս, իսկ մեզ նմանները տա-
ռապում են միայն...» շշնջաց Սալօմէն, վեր նա-
յելով դէպի այն փակ պատուհանը, որտեղից լըս-
ուում էր նուազը:

Մի փոքր ցած, մի ուրիշ տան միջից լսելի
էր խմբովին «Երնէկ թէ այս նոր տարին...» եր-
գը: Սալօմէն նորից նայեց վեր, զլուխը շարժեց
և արցունք թափելով աչքերից, հառաչեց. «Թըշ-
ուառի նոր-տարին դառն արտասունքն է...»:

Յանկարծ յիշեց, որ այսօր վերջին օրն է,
որ պարտաւոր են ամբողջ եօթ բուրըն վճարել
տանտիրոջը, ապա թէ ոչ անպէտք իրերի նման
դուրս կը շարտուին գեանափորից: «Զը լինի թէ
արդէն եկել է տանտէրը և դուրս է հանում մե-
րոնց...» մտածեց նա և մի խոր հոգոց հանելով,
աճապարեց առաջ:

Նրա ձեռքերի ու ոտների մասները ցրտից
անզգայցել էին, բայց նա այդ չէր զգում այն
ուրախութեան ազգեցութեան տակ, որ այս կի-
շեր երեխաները սովաման չեն լինի և վաղը—
նոր-տարուն, իր մանր բալէքը մի մի կանֆէտ
կ'ունենան և իսպառ դուրկ չեն մնայ տօնական
զուարձութիւնից...

Երբ արդէն նա մտաւ իրանց փողոցը, այն-

տեղ գտնուող հացթուխից գնեց 21 կոպէկի հաց, մանրավաճառից 15 կոպէկի կանֆէտ, խակ մնացած 41 կոպէկը թաշկինակում կապեց ու դիմեց տուն:

Սրտի ուժգին բարախումով նա մտաւ բակ, մօւեցաւ իրանց ներքնայարկ նկուղին. սկզբում ականջ գրեց ձեզքից, ապա գուռը բացեց ու մտաւ:

Ծերունի Մօսօն, փաթաթուած իր ցնցոտի, կեղասոս քուրքի մէջ, կուչ էր եկել տախտի վրայ ու ցրտից դողդողում էր: Փոքը երեխան քնած էր, խակ միւտները ցրտից ու քաղցից տառապած պառկուել էին, գլխները դրել հօր ծնկների վրայ ու այդպէս կիսաքուն մնացել: Դռան ճռսոցը և սառնամանիքի ուժգին հոսանքը սթափեցրեց Մօսօյին և Սաթենիկին:

— Հը, Սալօմէ, հաց բերել ես, հարցը Եօ Մօսօն, մարդիկ խղճացին մեղ վրայ:

— Բերել եմ, բերել եմ, ելէք, հաց եմ բերել, ուրախ-ուրախ խօսեց Սալօմէն ու վրայ վաղեց երեխաներին:

— Մայրիկ ջան, հաց ես բերել, հրճուանքով աղաղակեց Սաթենիկը, — ելէք, քոյրիկներս, արթնացէք, ձայնեց նա բոլորին, մօտենալով և հրելով իւրաքանչիւրին:

Երեխաները արթնացան, աչքերը տրորեցին և դեռ չը նկատելով հացը՝ ինստինկտարար միաժամանակ ասացին.

— Մայրիկ, քաղցած եմ, հաց եմ ուզում...

— Ահա ձեզ հաց, սիրելի բալէքս, կերէք, խօսեց մայրն և հացը կարտեց: Երեխաները ուրախութիւնից իրանց կորցրին ու բացականչեցին.

— Հաց, հաց, և վրայ թափուելով, սկսեցին աղահարար ուտել սառած ցամաք հացը:

Մինչ երեխաներն ուտում էին և իրանց դալկացած մարմինները կազդուրում, Սալօմէն ամուսնու հետ կուչ եկած, պատմում էր իր մուրալը, հարստի անգթութիւնը, ծառայի բարեսըրտութիւնը և միւնոյն ժամանակ դիտում էր երեխաներին:

— Մայրիկ, կանֆէտ չը բերի՞ր, հարցը կուքրից մէկը, փոքր ինչ կշտանալուց յետոյ:

Մայրը հանեց զրպանից կանֆէտները, իւրաքանչիւրին տուեց երկու-երկու հատ, համբուրեց նրանց և պատուիրեց պահել վաղուայ համար, որովհետեւ վաղն է նոր-տարրին: Երեխաների ուրախութիւնը չափից անցաւ, նրանք այժմ կուշտ էին և ունէին նոր-տարրուայ միրդ. և այդ ուրախութիւնը մոռացնել տուեց ցրտից մրսելը և դողդողալը...

— Ա՛խ, երանի մի-մի բաժակ տաք թէյ լինէր, խմէինք, շնչաց Մօսօն և աւելի ևս փաթաթուեց քուրքի մէջ:

Ապա ամուսինները կերան մնացած հացի մի մասը, որով իհարկէ, բոլորովին չը կշտացան, խակ մնացեալ մի կտորը պահեցին՝ հետեւալ օրը

Երեխաներին տալու համար:

Եւ սինչ այդ թշուաները ժամանակաւորապէս գոհանում էին Աստծուց, աշխատելով, միմիթարել, միմեանց յանկարծ զրսից լսուեցին ձայներ և դուռը նորից ճռաց:

Սենեակում եղողները վախից դողդողացին...

Ներս մտան տանտէրը և երկու ծառաներ:

—Դէն, այսօր վերջին օրն է, տալո՞ս էք իմ եօթը բութին թէ՞ ոչ. շատ համբերել եմ, այսա չեմ կարող համբերել, խրոխտաց տանտէրը:

—Պարոն, ի սէր Աստծու խղճա մեղ, մի քանի օր էլ ժամանակ տուր, կամ կը տանք փողը, կամ կը տեղափոխուենք, աղերսեց Սալօմէն:

Երեխաները վախից խմբուեցին իրանց հօր շուրջը և կուչ եկան:

—Ի՞նչ, տեղափոխուէք, հապա իմ փողը, բարկացաւ տանտէրը, —ի՞նչպէս չէ, ես ձեզ ազատ կը թողնեմ, որ տեղափոխուէք:

—Ախր պարոն, ցամաք հաց անզամ չ'ունինք այս թշուառ երեխերին կերակրելու համար, փայտ չ'ունենք վառելու, ցրտից մեռնում ենք, խղճա սրանց, չոգեց Սալօմէն և ուզեց համբուրել պարոնի ոստները:

—Այդ իմ բանը չէ, հեռացիր, գոռաց նա և յետ-յետ քաշուեց:

—Դէն շատ մի խօսիր, զայրացաւ ծառան, տալիս էք փողը այս բոպէխ, թէ ոչ ձեզ կը տանենք, ոստիկանատուն սաստեց ծառան:

—Ի սէր Աստծու, ի սէր մարդասիրութեան, կոպէկ անզամ չ'ունենք, եկէք պտրտեցէք, պաղպատեցէք Մօսօն լալագին և առաջ եկաւ:

—Այլ ևս իզուր է, մինչև բարեէք ինձ. իսկոյն բոնեցէք և տարէք սրան պարոն պրիստաւի մօտ, թողնա կարգադրէ, դարձաւ տանտէրը ծառային:

—Աղաչում եմ խղճացէք, մեղ մի կորցնէք յաւիտեան, գա է մեր պահողը, ուր էք տանում դրան, նեկեկաց Սալօմէն ձեռները փարելով դէպի տանտէրը:

Ապա նա իսկոյն գրպանից հանեց թաշկինակում պահած 41 կոպէկը, մեկնեց տանտիրոջը ասելով.

—Ահա մեր ամբողջ ունեցածը, որ վաղուայ ցամաք հայի գինն է. վերցրէք, վերցրէք, սիայն խղճացէք, իսկ մնացածը յետոյ կը վճարենք:

—Ի՞նչ, ի՞նչ, անասուններ, ծիծաղնում էք ինձ վրայ, առէք ձեր աշքը դրէք, կատաղեց տանտէրը, վերցրեց կոպէկները և շպրտեց գետին, որ և ցիրուցան եղան այս ու այն կողմ: —Դէն, այժմ արդէն բոնեցէք և հէնց հիմա տաշում պրիստաւի մօտ, ես պատասխանատու եմ, խօսեց տանտէրը:

—Դէն, ուրեմն գնանք պրիստաւի մօտ, հրամայեց ծառան և Մօսօնի թևից բոնելով հրեց դէպի դուռը:

—Միթէ ամենքդ քարասիրտ էք, ասաց Մօսօն, չէ՞ որ դուք մարդիկ էք:

Այս խօսքի վրայ ծառան վիրաւորուած զգաց
իրան և այնպէս ուժով քաշեց Մօօին ու հրեց,
որ վերջինս առաջ-առաջ գնալով, վայր ընկաւ
մաց գետնի վրայ:

Իսկոյն կինը և երեխաները բարձրաձայն լաց
լինելով մօտ վաղեցին և շրջապատեցին հօրը.

—Մի՞ գնա, հայրիկ, մի՞ գնա, աղաղակում
էին նրանք:

Սաթենիկը բռնեց ծառայի թեր, որպէս զի
արգելէ նրան՝ հօրը տանելու: Սակայն ծառան
ապատակ զարկեց Սաթենիկին, որ սա ցաւից ճշա-
լով յետ քաշուեց:

—Անխիղճներ, դուք սիրտ չունիք, դուք
կործանում էք մեզ, լալիս էք Սալօմէն ու ծընկ-
ներին զարկում:

Տանտէրը ուշադրութիւն չը դարձրեց նրանց
ողբէ ու կոծի վբայ, այլ միայն հրամայեց.

—Տարէք, տարէք, ըստիկանատուն, ես եմ
պատասխանատուն այս բոլորի համար, և ինքը
դուրս ելաւ:

Ծառանեեր բարձրացրին վայր ընկած Մօ-
սօյին և երկուսով քաշելով նրան, դուրս տարան:

Այդ տեսնելով Սալօմէն և երեխաները միա-
ձայն ողբալով և աղաղակելով աշխատեցին հօրը
խլել ծառաների ձեռքից:

Բայց իզուր... Ծառան ձեռքի փայտով աջ
ու ձախ հարուած տուեց ու հեռացրեց նրանց,
իսկ Մօօին առաջ վարեցին ու տարան...

Սալօմէն այլ ևս անկարող եղաւ գիմանալ
այդ վերջին հարուածին. Նա մի ճիչ արձակեց և
ուշաթափ փոռուեցաւ գետնափորի ցուրտ ու չոր
շէմքի վրայ:

Զաւակները, տեսնելով իրանց մօրը անզգա-
յացած, մի ըսպէ մոռացան հօրը, ընկան մօր
վրայ ու սկսեցին դառնագին հեկեկալ, աղաղա-
կելով.

—Մայրիկ, մայրիկ...

Եւ նրանց այս սրտամորմով հեկեկանկըներն
և աղիողորմ բացականչութիւնները բայց գոնից
տարածւում էին դուրս—ձմեռային սառնամա-
նիքի ու մթութեան մէջ, գիշչում մօտակայ
տների սառը պատերին և անզդադառնալով տա-
րածւում հեռու... հեռու... աւելի հեռու և վերջի
վերջոյ անհետանում...





Նոյն շեղինակի լրյա տեսած աշխատասիրու-
թինները՝

- | | | | | | |
|----|-------------------------------------|---|---|---|-------|
| 1. | ԽՈՐՏԱԿՈՒՄԾ ՄՔՐ (վէպիկ) գինը | . | . | . | 30 կ. |
| 2. | ԳՐԲԱՅԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ (պատկեր) գ. | . | . | . | 5 կ. |
| 3. | ԿԵՍՆՔԻ ՌՕՄԱՆԻՑ (վէպիկ) գ. | . | . | . | 25 կ. |
| 4. | ԷՄԻԼ ԶՈԼԱ (ֆոքրիկ տեսութիւն) | . | . | . | 5 կ. |
| 5. | ԼՈՒՄԱՆԻ ՀԵՐԻՄԸ (պատկեր) գ. | . | . | . | 8 կ. |
| 6. | ՐԱՅՖԻ (համառօտ տեսութիւն) գ. | . | . | . | 10 կ. |
| 7. | ԿԵՍՆՔԻ ԽՈՐՃԵՐԻՑ (պատկերներ) գ. | . | . | . | 20 կ. |
| 8. | ԱՌԱՋԻՆ ՄՈՒՐԱՅԿԱՆՈՒԹԻՒՆԸ (պատկեր) գ. | . | . | . | 8 կ. |

Թ ա բ գ ժ ա ն ո ւ թ ի ւ ն ն ն ը ը

- | | | | | | |
|----|----------------------|---|---|---|------|
| 1. | ԱՆԻԽԱ (Չեխովից) գինը | . | . | . | 3 կ. |
| 2. | ԴԻՄԱԿ (Չեխովից) գինը | . | . | . | 5 կ. |

Գրքերի պահեստը—Թիֆլիս—«Գուտանրերգ» գրա-
վաճանուցում (Дворцовая ул. № 9 въ домъ Лалаева,
рядомъ съ Коммерческимъ банкомъ):

Հեղինակին գիմոդները արտօնեալ զիջում կունե-
նան:

Հասցէն—նոյն գրախանութում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0332549

28596

891.99

4-58